# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«07» դեկտեմբերի 2021 թվականի N **326**

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 2019թ. հունիսի 26-ի թիվ 49-Ա որոշումը, Ստեփանավան համայնքի Մեսրոպյան փողոց թիվ 12 հասեում բնակվող Նադեժդա Վարոսյանի 30.11.2021թ թիվ Վ-562 դիմումը, Չարենցի փողոց թիվ 179/19 հասցեում բնակող Ամալյա Մարդոյանի 30.11.2021թ. թիվ Մ-558 դիմումը, Աշտարակ թաղամաս թիվ 19/9 հասցեում բնակող Արմինե Մկրտչյանի 01.11.2021թ. թիվ Մ-565 դիմումը, Չարենցի փողոց թիվ 121 հասցեում բնակվող Ջուլիետտա Մարգարյանի 03.12.2021թ. թիվ Ջ-569 դիմումը, Մյասնիկյան փողոց թիվ 14/12 հասցեում բնակող Զարուհի Ռաֆիկի Այվազյանի 06.12.2021թ. թիվ Ա-571 դիմումը և 409 դիվիզիա փողոց թիվ 12 հասցեում բնակող Աննա Հայկի Աթաբեկյանի 08.12.2021թ. թիվ Ա-572 դիմումը Ստեփանավան համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 08.02.2021թ. թիվ 11/1 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 08.12.2021թ. արձանագրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ *որոշում եմ.*

1. Ստեփանավան համայնքի բնակիչներ Նադեժդա Վարոսյանի ընտանիքին տրամադրել 20000 (քսան հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն, Ամալյա Մարդոյանի ընտանիքին տրամադրել 20000 (քսան հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն, Արմինե Մկրտչյանի ընտանիքին տրամադրել 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն, Ջուլիետտա Մարգարյանի ընտանիքին տրամադրել 20000 (քսան հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն, Զարուհի Այվազյանի ընտանիքին տրամադրել 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն և Աննա Աթաբեկյանի ընտանիքին տրամադրել 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«10» դեկտեմբերի 2021 թվականի N 327

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՓՈՂՈՑ 13 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՓՈՂՈՑ 13/1 ԱՎՏՈՏՆԱԿԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի Անտառային փողոց 13 բնակելի տան հասցեի բնակիչ՝ Գարիկ Ժորայի Մարիկյանի կողմից ներկայացված դիմումը, 05.11.2021թ. N 05112021-06-0030 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի վկայականը և 15.11.2021թ. N 15112021-06-0068 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ք. Ստեփանավան Անտառային փողոց 13 բնակելի տան և ք. Ստեփանավան Անտառային փողոց 13/1 ավտոտնակի միավորված՝ 0.05779 հա անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հացեն՝ ՀՀ մարզ Լոռի համայնք Ստեփանավան, ք.Ստեփանավան, Անտառային փողոց, 13 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» դեկտեմբերի 2021 թվականի N 328

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ 68բ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարդան Գարեգինի Սարգսյանի կողմից ներկայացված 08.12.2021թ. թիվ Ս-576 դիմումը, 10.08.2009թ. տրված թիվ 2503213 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Ստեփանավան քաղաքի Միքայելյան 68բ տնամերձ հողատարածքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան, Ա. Միքայելյան փողոց, 48 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» դեկտեմբերի 2021 թվականի N 329

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 4-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆ 9-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալա Արմիկի Սահակյանի կողմից ներկայացված 06.12.2021թ. թիվ Ս-570 դիմումը, 27.01.2021թ. N 27012021-06-0012 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան քաղաքի 4-րդ միկրոշրջան 9-րդ փողոց թիվ 4 բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան, Կարսի փողոց, 3 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» դեկտեմբերի 2021 թվականի N 330

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐԻ 25.12.2021Թ. ԹԻՎ 318 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ղեկավարի 25.12.2021թ. թիվ 318 որոշումը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին ՀՀ օրենքի 34 հոդվածի 4-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի ղեկավարի 25.12.2021թ. N 318 որոշման 3-րդ կետից հետո ավելացնել նոր կետ հետևյալ բովանդակությամբ՝ անշարժ գույքի տեխնիկական անձնագրով գրանցված Ջանիբեկի հայրանունը ուղղել Ջանիբեգի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«10» դեկտեմբերի 2021 թվականի N **331**

### ԱՇՈՏ ԱՊԱՎԵՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ստեփանավան համայնքի բնակիչ՝ Աշոտ Ապավենի Բաղդասարյանը դիմել է Ստեփանավանի համայնքապետարան իր նկատմամբ օգնական (պատրոն) նշանակելու խնդրանքով:

2018 թվականին հիվանդության պատճառով Աշոտ Ապավենի Բաղդասարյանի 2 ոտքերը ծնկից վերև անդամահատվել են: Տարվել են մի շարք վիրահատություններ (թոքի, ստամոքսի, միզապարկի, հաստ աղիքի): Վերջինս տառապում է շաքարային դիաբետով, ներկայումս ունի պորտային ճողվածք, սրտային անբավարարություն, հիպերտոնիա: Գամված է սայլակին՝ միացված է մի քանի բժշկական ապարատներ:

Հիվանդությունների պատճառով վերջինս չի կարող ինքնուրույն իրականացնել որևէ գործողություն, առանց կողմնակի օգնության չի կարող տեղաշարժվել և ինքնուրույն հոգալ սեփական կենցաղավարման կարիքները: Վերոգրյալը խոչընդոտ է հանդիսանում նաև Աշոտ Ապավենի Բաղդասարյանի կողմից իր իրավունքների իրականացման և պաշտպանության, ինչպես նաև պարտականությունների կատարման համար:

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձաժողովի 09.12.2021թ. կատարած տունայցի համաձայն՝ Աշոտ Ապավենի Բաղդասարյանի բնակարանային պայմանները բարենպաստ չեն: Տունը պատկանում է Աշոտ Բաղդասարյանի մորը՝ Անժիկ Ջինանյանին: Այն մասնաբաժինը, որտեղ բնակվում է Աշոտ Բաղդասարյանը, ներքնահարկն է՝ բաղկացած է մեկ ննջարանից, միջանցքը խոհանոցի հետ միասին է: Բնակարանը ջեռուցվում է փայտյա վառարանով կա մշտական ջուր, հոսանք: Առկա չէ կենցաղային տեխնիկա: Միակ եկամուտի աղբյուրը Աշոտ Ապավենի Բաղդասարյանի հաշմանդամության թոշակն է, որը կազմում է՝ 26500 /քսանվեց հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ և ընտանեկան նպաստը, որը կազմում է՝ 18000 /տասնութ հազար/ ՀՀ դրամ:

Հաշվի առնելով այն, որ Աշոտ Ապավենի Բաղդասարյանը տվել է իր համաձայնությունը, որ իր որդին՝ Արշակ Աշոտի Բաղդասարյանը նշանակվի իրեն օգնական (պատրոն), հիմք ընդունելով Ստեփանավանի համայնքապետարի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 10.12.2021թ. նիստի եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 02 հունիսի 2016թ. թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 24.02.2011թ. թիվ 164-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման 9-րդ կետի 14-րդ ենթակետով,

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Զափահաս, գործունակ քաղաքացի՝ Աշոտ Ապավենի Բաղդասարյանի (ծնված՝ 10.06.1974թ., ն/ք՝ 007744089, տրված՝ 12.04.2016թ., 053-ի կողմից) նկատմամբ անժամկետ պատրոն (օգնական) նշանակել նրա որդի՝ Արշակ Աշոտի Բաղդասարյանին (ծնված՝ 01.02.2000թ., ն/ք՝ 012816328, տրված՝ 25.06.2020թ., 053-ի կողմից):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» դեկտեմբերի 2021 թվականի N 332

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 2019թ. հունիսի 26-ի թիվ 49-Ա որոշումը, Ստեփանավան համայնքի Երիտասարդական փողոց թիվ 3/4 հասեում բնակվող Դոնարա Մատինյանի 08.12.2021թ թիվ Մ-575 դիմումը, Դեսինի փողոց թիվ 19/1 հասցեում բնակող Գրիշա Մանուկյանի 09.12.2021թ. թիվ Մ-582 դիմումը, Պրոմեթևս փողոց թիվ 53/21 հասցեում բնակող Արմինե Մանուկյանի 09.12.2021թ. թիվ Դ-584 դիմումը, Ռումինական փողոց թիվ 27/3 հասցեում բնակվող Ագնեսա Նահապետյանի 09.12.2021թ. թիվ Ն-581 դիմումը, Գ. Նժդեհ փողոց թիվ 17 հասցեում բնակող Թամարա Պապիկյանի 09.12.2021թ. թիվ Պ-584 դիմումը, Բաղրամյան փողոց թիվ 134/2 հասցեում բնակվող Արմեն Գրիգորյանի 10.12.2021թ. թիվ Գ-588 դիմումը և Տերյան փողոց 1 հասցեում բնակվող Կամելա Աղաջանյանի 13.12.2021թ. թիվ Ա-593 դիմումը, Ստեփանավան համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 08.02.2021թ. թիվ 11/1 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 13.12.2021թ. արձանագրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի բնակիչներ Դոնարա Մատինյանի ընտանիքին տրամադրել 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն, Գրիշա Մանուկյանի ընտանիքին տրամադրել 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն, Արմինե Մանուկյանի ընտանիքին տրամադրել 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն, Ագնեսա Նահապետյանի ընտանիքին տրամադրել 20000 (քսան հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն, Թամարա Պապիկյանի ընտանիքին տրամադրել 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն, Արմեն Գրիգորյանի ընտանիքին տրամադրել 20000 (քսան հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն և Կամելա Աղաջանյանի ընտանիքին տրամադրել 20000 (քսան հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» դեկտեմբերի 2021 թվականի N 333

### ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՔԻՇՄԻՇ ԱՐՏԱՎԱԶԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Քիշմիշ Կիրակոսյանի հողերից հրաժարվելու մասին 09.12.2021թ. Կ-405 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 1812448, N 1812449, N 1812450, վկայականները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 100 և 101-րդ հոդվածներով՝ *որոշում եմ.*

1. Դադարեցնել Քիշմիշի Արտավազի Կիրակոսյանի սեփականության իրավունքը 06-051-108-073 ծածկագրի 0.444 հա խոտհարքի, 06-051-127-035 ծածկագրի 1.33 խոտհարքի, 06-051-121-012 ծածկագրի 0.382 վարելահողի նկատմամբ: Անվավեր ճանաչել ԱԳԿ կողմից տրված 01.08.2003թ. N 1812448, N 1812449, N 1812450 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները:
2. 06-051-108-073 ծածկագրի 0.444 հա խոտհարքը, 06-051-127-035 ծածկագրի 1.33 խոտհարքը, 06-051-121-012 ծածկագրի 0.382 վարելահողը ճանաչել համայնքային սեփականություն:
3. Ներկայացնել ԱԳԿ համայնքային սեփականության վկայականներ ստանալու համար:
4. Հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«14» դեկտեմբերի 2021 թվականի N 334

### ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և առաջնորդվելով Ստեփանավան համայնքի ավագանու 2021 թվականի 02 դեկտեմբերի թիվ 02 -Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Սահմանել Ստեփանավան համայնքի 2021թ. բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային համամասնությունները՝ համաձայն 1.2 հավելվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» դեկտեմբերի 2021 թվականի N 335

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ 7Ա ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արծրուն Շավարշի Հովհաննիսյանի կողմից ներկայացված 10.12.2021թ. թիվ Հ-587 դիմումը, 19.04.2011թ. թիվ 2505560 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Ստեփանավան քաղաքի Իսահակյան 7Ա բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան, Ա. Իսահակյան փողոց, 7/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«14» դեկտեմբերի 2021 թվականի N 336

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0331-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ Վ. ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9 /ՆԱԽԿԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ՝ ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8Ա/ ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի Տերյան փողոց թիվ 9 հասցեի բնակելի տան սեփականատեր Վազգեն Հովհաննեսի Մեսրոպյանի /ծնված 10.04.1948թ./ կողմից ներկայացված դիմումը, 29.10.1976թ. գույքային թերթը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Վերականգնել Ստեփանավան համայնքի ք. Ստեփանավան 06-007-0331-0001 ծածկագրում գտնվող 502.9 քմ մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հողհատկացման հիմքերը՝

   ա/ Ստեփանավան քաղաքի 06-007-0331-0001 ծածկագրի հողամասի մակերեսը 502.9 քմ

   բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի։
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 502.9 քմ մակերեսով հողամասից 460.0 քմ օրինական հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասեր ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Վազգեն Հովհաննեսի Մեսրոպյանին, իսկ մինչև 15.05.2001թ. զբաղեցրած և առ այսօր օգտագործվող առանց իրավունք հաստատող փաստաթղթերի 42.9 քմ մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք անհատույց սեփականության իրավունքով հատկացնել՝ Վազգեն Հովհաննեսի Մեսրոպյանին և մինչև

15.05.2001թ. վերը նշված հողամասում կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. Ստեփանավան քաղաքի 06-007-0331-0001 ծածկագրի հողամասի վրա, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ չառաջացնող՝ մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 126.8 քմ մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 95.9 քմ մակերեսով բնակելի տան 2-րդ հարկի, 36.2 քմ մակերեսով բաց պատշգամբի, 18.1 քմ մակերեսով անասնաշենքի, 16.1 քմ մակերեսով ծածկի և 11.4 քմ մակերեսով պարիսպների նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել՝ Վազգեն Հովհաննեսի Մեսրոպյանի սեփականության իրավունքը:
4. Հաստատել վերը նշված անշարժ գույքի նոր փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան, Վ. Տերյան փողոց, թիվ 9 բնակելի տուն:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» դեկտեմբերի 2021 թվականի N 337

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Մ. ԲԱՂՐԱՄՅԱՆ 69 ԽԱՆՈՒԹԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեդա Վարդգեսի Առաքելյանի կողմից ներկայացված 13.12.2021թ. թիվ Ա-591 դիմումը, 15.06.2011թ. թիվ 1245185 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Ստեփանավան քաղաքի Մ. Բաղրամյան 69 խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան, Մարշալ Բաղրամյան փողոց, 69/2 խանութ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» դեկտեմբերի 2021 թվականի N 338

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐԻ 10.09.2021Թ. ԹԻՎ 182 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ղեկավարի 10.09.2021թ. թիվ 182 որոշումը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի ղեկավարի 10.09.2021թ. N182 որոշման 2-րդ կետից հետո նոր կետով ավելացնել՝ փոփոխված համարել 16.53 քմ ներքին մակերեսով թիվ 3 ավտոտնակի գործառնական նշանակությունը՝ ամառային խոհանոց գործառնական նշանակության, իսկ 34.41 քմ ներքին մակերեսով թիվ 5 ամառային խոհանոցի գործառնական նշանակությունը՝ հյուրատուն գործառնական նշանակության, քանի որ պետական գրանցում ստացած ավտոտնակի և ամառային խոհանոցի արտաքին փոփոխություններ չեն իրականացվել, շինությունների արտաքին պատերին նոր դռան կամ պատուհանի բացվածքներ չեն կատարվել: Նշված շինությունների նկատմամբ իրականացվել են ներքին միջնորմերի և հարդարման աշխատանքներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» դեկտեմբերի 2021 թվականի N 339

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0056-0033 ԾԱԾԿԱԳՐԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ 12/3 ՀԱՍՑԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ, ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐՈՎ 0.04 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՈՆԱ ԼՅՈՎԱՅԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սոնա Լյովայի Ղազարյանի կողմից ներկայացված դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան, ք.Ստեփանավան Իսահակյան փողոց 12/3 հասցեյում գտնվող հողամասի սահմանային չափերը ճշտելու խնդրանքը, 21.06.2021թ. N 21062021 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ճշտել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ք.Ստեփանավան Իսահակյան փողոց 12/3 հասցեի, 06-007-0056-0033 կադաստրային ծածկագրի 0.04 հա հողամասի սահմանային չափերը համաձայն «ԻՆԵՔՍ» ՍՊԸ -ի կողմից կազմված տեղագրական հատակագծի և ճշտված սահմանային ճափերով հողամասի նկատմամբ ճանաչել Սոնա Լյովայի Ղազարյանի սեփականության իրավունքը:
2. Հողամասի սահմանները հաստատել համաձայն «ԻՆԵՔՍ» ՍՊԸ -ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» դեկտեմբերի 2021 թվականի N 340

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԹԵԼՄԱՆԻ 1 ՌԵՍՏՈՐԱՆԻ ՇԵՆՔ ՀԱՍՑԵԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահան Վոլոդյայի Գրիգորյանի կողմից ներկայացված 17.12.2021թ. թիվ Գ-597 դիմումը, 25.02.2005 թ. թիվ 1190840 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Ստեփանավան քաղաքի Թելմանի 1 ռեստորանի շենք հասցեին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան, Է. Թելմանի փողոց, 1/1 ճաշարան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» դեկտեմբերի 2021 թվականի N **341**

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0740- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ ՏԱՐԱՆՋԱՏՎԱԾ 2.7 ՀԱ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Սագամար» ՓԲԸ-ի կողմից ներկայացված 02.12.2021թ. թիվ 873 դիմումը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի Ն 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը, 13.12.2013 թ. N 54-Ն ավագանու որոշումը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի 06-007-0740- կադաստրային ծածկագրից տարանջատված 2.7 հա արդյունաբերական հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, գ. Արմանիս 1-ին փողոց, 31 սպասարկման համալիր:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ